ԱԶԳ

# Ղարաբաղի հարց

Հարցը շատ լուրջ է եւ կարեւոր: Վերջերս վերադարձա Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից: Դա իմ 30-րդ այցելությունն էր: Խիստ մտահոգված եմ ողբերգական հակամարտության հավանական քաղաքական լուծման առնչված բանակցությունների ներկայիս զարգացումից՝ հակամարտություն, որը բազում տառապանքներ է պատճառել ե՛ւ հայերին, ե՛ւ ադրբեջանցիներին:

Միանգամից խոստովանեմ, որ իմ համակրանքը հայության կողմն է, առավել եւս՝ նրանց, ովքեր ապրում են իրենց հինավուրց հողում՝ Լեռնային Ղարաբաղում:

1991 թ. մայիսին Մոսկվայում ընթանում էր Անդրեյ Սախարովի հիշատակին նվիրված Մարդու իրավունքների գծով վեհաժողովը: Ես մեկնեցի այնտեղ միջազգային փորձագետների միջազգային պատվիրակության հետ: Դրանից հետո մենք ուղեւորվեցինք Հայաստան, ուր հանդիպեցինք փախստական հայերի, որոնց Ադրբեջանն ու խորհրդային 4-րդ բանակի զորքերը բռնագաղթեցրել էին իրենց հողերից: Այնուհետեւ, կտրեցինք սահմանը, փորձեցինք հենց ադրբեջանցիներից իմանալ, հասկանալ իրենց տեսակետը կատարվող դեպքերի վերաբերյալ, սակայն ոչինչ չիմանալով, որոշեցինք մեկնել Բաքու: Հանդիպեցինք Բաքվի քաղաքական առաջնորդներին, որոնք իրականացվող հակահայկական քաղաքականության մասին որեւէ հասկանալի բացատրություն չտվեցին:

1992 թ. հունվարին վերադարձա Ղարաբաղ՝ վերջինիս դեմ Ադրբեջանի ռազմական հարձակման ուժեղացման ժամանակ: Այնտեղ իմ եւ գործընկերներիս ամեն տեսածն ու լսածը հանգեցրեց այն եզրակացության, որ տվյալ ողբերգական հակամարտության այդ բոլոր տարիներին Ադրբեջանը եղել է գլխավոր ագրեսորը:

Ես անհանգստացած էի նաեւ հակամարտության պատճառով տուժած ադրբեջանցիների ճակատագրով: Եվ օգնեցի միջոցներ հանգանակելու MERLIN մարդասիրական կազմակերպության համար, որն աջակցում է Ադրբեջանի փախստականներին:

Բայց, այդուամենայնիվ, փաստերը վկայում են, որ տվյալ հակամարտության մեջ հիմնական տուժածը Ղարաբաղի հայությունն է, որը տասնամյակներ շարունակ Ադրբեջանի լծի տակ է եղել, եւ երբ համբերության բաժակը լցվեց, փորձեց լուծել իր գոյատեւման խնդիրը:

Ինձ հայտնի է, որ Ադրբեջանը բազմիցս հրավիրել է հայտնի քաղաքական գործիչների եւ միջազգային ԶԼՄ ներկայացուցիչների, որոնք գլխիվայր դնելով փաստերը, փորձում էին համոզել աշխարհին, թե որքան են ադրբեջանցիները տուժել հայերից: Բայց ավելի կարեւոր է սեփական աչքերով տեսնել պատերազմի սարսափները բուն Ղարաբաղում: Ես անցա այս ամենի միջով:

Այս նամակ-հավելվածը կարող է լույս սփռել Ղարաբաղի խնդիրների վրա, քանզի տեղեկությունը հիմնված է հարցի անձնական մանրազնին ուսումնասիրման վրա, անկողմնակալ է ու անաչառ:

## Վերջին տեղեկություններ Լեռնային Ղարաբաղի մասին

Պատմական ծագումը.

Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի մասը՝ մինչեւ 1921 թ. Իոսիֆ Ստալինի ինքնահեծան որոշումը: Ուստի իրավական արդարացում չի կարող լինել այն հայտարարությանը, թե Ղարաբաղը Ադրբեջանի «անքակտելի» մասն է:

Ստորեւ ներկայացվող հաղորդումը բացահայտում է այն պատճառը, թե ինչու Ղարաբաղի ժողովուրդը չի կարող անկախություն ձեռք բերել, մնալով Ադրբեջանի կազմի մեջ, եւ ինչո՞ւ հակամարտությունը ԵԱՀԿ շրջանակներում կարգավորելու ցանկացած քաղաքական փորձ ձախողման է դատապարտված: Այս ամենը հիմնված է պատմական խոր փորձառության եւ անմիջականորեն նախորդ տարիների ողբերգական դեպքերի վրա:

Տասնամյակներ շարունակ Ադրբեջանը մորթել, ահաբեկել եւ տնտեսապես շահագործել է Ղարաբաղի հայությանը: Շուշին, որին պատմության կեղծարարները ադրբեջանական քաղաք են համարում, իրականում՝ մինչեւ 1920 թվականը եղել է Ղարաբաղի մայրաքաղաքը եւ հայ մշակույթի հայտնի կենտրոնը: Դրանում կարելի է համոզվել լինելով Շուշիում, հայոց տաճարները եւ հազարավոր հինավուրց տապանաքարերը տեսնելուց հետո:

Այժմ Ղարաբաղում բնակվող բազմաթիվ հայեր տուժել են Ադրբեջանի ղեկավարության կազմակերպած ազգային զտման քաղաքականությունից:

Դեռ կենդանի են այն սակավաթիվ հայերը, որոնք անձամբ տեսել են 1915 թ.-ին Թուրքիայի կողմից գործադրված կոտորածը, երբ իրենց 1,5 միլիոն հայրենակիցներ անգթորեն մորթվեցին: Թուրքիան առ այսօր չի ճանաչում ցեղասպանության փաստը: Հայաստանի հանդեպ այժմ էլ շարունակվող այդ թշնամանքն ու անբարյացակամությունն այսօր արտահայտվում է Հայաստանի դեմ ուղղված պատերազմի եւ չդադարող շրջափակման հարցում Ադրբեջանին ռազմական օգնություն ցույց տալու մեջ:

Անշուշտ, քիչ չեն վերջին տարիների դեպքերի հետեւանքով ակամա զոհ դարձած ադրբեջանցիները, սակայն նրանց զոհը չի ուղեկցվել հայերի կողմից գործադրված ջարդով...

## Պատերազմը եւ նրա արձագանքը

Հայտնի է, որ ցանկացած պատերազմում հակամարտող կողմերը դաժանորեն խախտում են մարդու իրավունքները: Սակայն, այս պատերազմում տեղի ունեցող կանոնավոր անհամաչափությունը հանգեցնում է այն հետեւության, որ գլխավոր ագրեսորն Ադրբեջանն է՝ ներքոհիշյալ հինգ պատճառներով.

1. Ադրբեջանը՝ խորհրդային 4-րդ բանակի հետ միասին 1991 թ.-ին «Օղակ» օպերացիան իրականացնելիս բռնագաղթեցրել է հայերին իրենց գյուղերից, հայերին բռնի դուրս մղել իրենց հայրենիքից, ուր նրանք բնակվել են դարեր շարունակ: Մեծաթիվ եկեղեցիներ հաստատում են այդ:

2. Խաղաղ բնակչության դեմ «Գրադ» կայանքն առաջին անգամ գործադրել է Ադրբեջանը: Հայերն ստիպված եղան գրավելու այն տարածքները, որտեղ տեղակայված էին անթիվ կրակակետեր, թեեւ միջազգային ընկերակցությունն այդ ինքնապաշտպանությունը որակեց իբրեւ «ագրեսիա»:

3. Միայն Ադրբեջանն է կիրառել քաղաքացիական օբյեկտների օդային ռմբակոծություններ՝ ոչնչացնելով մարդկանց, նյութական արժեքներ, քրիստոնեական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ:

4. Միայն Ադրբեջանն է կիրառել «երկիր-երկիր» կայանքները խաղաղ բնակչության դեմ: Այդ հատուկ զենքն իր շուրջը ոչնչացնում է ամեն ինչ: Այդ ամենը ես տեսել եմ սեփական աչքերով:

5. Ադրբեջանն է, որը Թուրքիայի հետ մեկտեղ շրջափակել է եւ այժմ էլ շրջափակման մեջ է պահում Հայաստանը: Այն էլ՝ հազարավոր հայերի կյանքը տարած երկրաշարժից (1988 թ.) հետո: Ադրբեջանը թալանել է Հայաստանին հասցեագրված մարդասիրական բեռները:

Այդ Ղարաբաղի հայերը չեն, որ սկսել են ռազմական հարձակումը: 150- հազարանոց Ղարաբաղը կարողացավ պաշտպանել իր հողը 7-միլիոնանոց Ադրբեջանից, որն անընդհատ օգնություն է ստանում Թուրքիայից: Այդ մասին մենք ունենք բազմաթիվ անվիճելի փաստաթղթեր:

Ադրբեջանի ներկայիս նախագահը հրապարակորեն հայտարարել է Ղարաբաղը հայերից ազգազտելու, ասել է՝ թե հայաթափ անելու իր քաղաքականության մասին: Իսկ նախկին նախագահ Էլչիբեյը 1992-ի հունիսին հայտարարել է, որ եթե հոկտեմբերին հայերը մնան Ղարաբաղում՝ թող ադրբեջանցիները կախեն իրեն Բաքվի հրապարակում:

Պատերազմի ընթացքում եղան շատ հաղթանակներ ու պարտություններ: 1992-ի մայիսին հայերն ազատագրեցին Շուշին եւ Լաչինով միջանցք բացեցին դեպի Հայաստան: Միջազգային ընկերակցությունը դատապարտեց նրանց դրա համար: Սակայն այդ միջանցքը նրանց հարկավոր չէր լինի, եթե չլիներ շրջափակումը: Այդ կամուրջը Ղարաբաղի համար կենսականորեն անհրաժեշտ էր: Իսկ միջազգային ընկերակցությունը հանգիստ լռում էր այս մասին: Հայերը գրավեցին Շուշին, որովհետեւ նրա բարձր իշխող դիրքից «Գրադով» հրթիռակոծում էին Ստեփանակերտն ու գյուղերը: Դարձյալ ղարաբաղցիներին մեղադրեցին, որ նրանք զավթել են «ադրբեջանական» քաղաքը: Բայց ոչ ոք չճանաչեց այն փաստը, որ Շուշին ի սկզբանե հայկական քաղաք է եղել, որը 1920 թ.-ին հրկիզել են ադրբեջանցիները:

## Ներկայիս իրադրությունը

Ամենաահավորն այն է, որ բազմաթիվ ադրբեջանցի փախստականներ մինչեւ այժմ Ադրբեջանում ապրում են անտանելի պայմաններում: Եվ դա այն դեպքում, երբ հանրապետությունից բռնի վտարվել են 500 հազար հայեր, որոնք «ազատել են» իրենց տները: Իսկ Հայաստանը, որտեղ մնացել էին երկրաշարժ վերապրած բազում թշվառներ, եւ որը նաեւ մինչեւ այժմ անդադար շրջափակման մեջ է, բնակության անհրաժեշտ պայմաններ ստեղծեց փախստականների համար:

Ադրբեջանի ներկա պահանջները Շուշին եւ Լաչինը վերադարձնելու մասին չեն կարող լրջորեն ընդունվել Ղարաբաղի հայության կողմից եւ բանակցությունների առարկա չեն կարող դառնալ, քանզի միջանցքը կենսական անհրաժեշտություն է Հայաստանի հետ հաղորդակցվելու համար: Իսկ Շուշին Գոլանի բարձունքների համարժեքն է:

Ղարաբաղի իշխանությունները չեն կարող նաեւ անտեսել այն փաստը, որ Ադրբեջանն ակտիվորեն շարունակում է զինվել եւ ամրապնդել դիրքերը սահմանի ողջ երկայնքով: Սակայն, չնայած դրան, Ղարաբաղն ունի շատ հզոր բանակ, որը ետ կմղի Ադրբեջանի ամեն մի նոր ագրեսիա: Հարցը բարդանում է, որովհետեւ միջազգային ընկերակցությունը վիթխարի ներդրումներ է անում այդ երկրի էկոնոմիկայի մեջ:

Եթե հակամարտությունը չկարգավորվի եւ Ադրբեջանը ցեղասպանության ու ազգազտման նոր փորձ ձեռնարկի Ղարաբաղի հայության հանդեպ, ապա միանգամայն հավանական է, որ Հայաստանը միջամտի: Եթե Հայաստանը ճարահատյալ ներքաշվի հակամարտության մեջ, ապա այն կվերածվի տարածաշրջանային պատերազմի:

Ահա՛ թե ինչու այդքան կարեւոր է, որ միջազգային հանրությունն ամեն ինչ անի Ադրբեջանի հետագա ռազմական ներխուժումները կանխելու համար եւ հիմնախնդիրը լուծի այնպես, որ Ղարաբաղի բազմաչարչար հայությունը կարողանա վերջապես ազատ ապրել իր ազատ երկրում:

*Հունվար, 1997 թ.*

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

# Հրդեհը կարելի է կանխել, քանի դեռ ուշ չէ

*Բարոնուհի Քոկսի ուղերձը Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտության քաղաքական կարգավորմամբ շահագրգռված բոլոր անձանց*

**Օրերս Անգլիայի լորդերի պալատի երկրորդ խոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսը մի ուղերձ է հղել բրիտանական խորհրդարանին, Եվրոպայի խորհրդին եւ ԵԱՀԿ-ին, որի տեքստն ուղարկել է ինձ, խնդրելով մամուլի միջոցով հաղորդել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտության քաղաքական կարգավորմամբ շահագրգռված բոլոր անձանց, ինչպես նաեւ Երեւանում եւ Ստեփանակերտում ԵԱՀԿ-ի ներկայացուցիչներին:**

**Կատարելով լեդի Քոկսի խնդրանքը՝ ցանկալի է ընդգծել նրա անհանգստությունը ռազմական ներուժն Ադրբեջանի կողմից հզորացնելու առնչությամբ, որը զենք է ստանում ոչ միայն Թուրքիայից, այլ նաեւ այլ երկրներից, այդ թվում, ինչպես վերջերս հրապարակվեց մամուլով՝ Ռուսաստանից: Կասկած չկա, որ արդեն այսօր այդ զենքն ուղղված է Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների դեմ:**

**Դժվար չէ կռահել, թե, օրինակ, ինչու է Ադրբեջանն ավելացնում ռազմավարական հրթիռների, մարտական ինքնաթիռների եւ անգամ պարաշյուտների թիվը: Այդ ամենն աղետ է խոստանում, մեծ աղետ: Եվ այդ պարագայում դժվար է չհամաձայնել լեդի Քոկսի մտքի հետ, որը գործիմացությամբ պնդում է, որ եթե Ադրբեջանը կրկին փորձի Արցախում իրագործել «ցեղասպանություն եւ ազգազտում» եւ սույնով պարտադրի Հայաստանին պաշտոնապես մտնելու հակամարտության մեջ, ապա տեղային պատերազմն անխուսափելիորեն կվերածվի տարածաշրջանային պատերազմի, որի մասշտաբային հետեւանքները դժվար կլինի կանխատեսել:**

**Շահադիտորեն խաղարկելով նավթային «արժեթղթերը» Ադրբեջանը չի գիտակցում, որ իսկական կրակի հետ է խաղում: Այդ խաղը վտանգավոր է առավել այն պատճառով, որ ինքը՝ նավթը հեշտ է հրդեհվում եւ դժվար էլ մարվում: Եվ մնում է միայն ողջունել լեդի Քոկսի ազնիվ ուղերձը, որով նա փորձում է պրոֆիլակտիկ ձեւով կանխարգելել մեծ չարիքը: Բարեբախտաբար, ինչպես ցույց է տալիս մեր կյանքը, հրդեհը կարելի է կանխել: Դրա ապացույցն է իրական խաղաղությունը, որ շուտով արդեն երեք տարի տիրում է տարածաշրջանում: Եվ երկու ժողովուրդների բաղձալի այդ ժամկետն ինքնին շոշափելի փաստարկ է, որ երկու կողմերը կարող են ապրել առանց պատերազմի, անշուշտ, եթե քաղաքական գործիչները կրակի հետ չխաղան:**

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# Իրավահավասար միությո՞ւն, թե՞ մշտական պատերազմ

Բանակցային գործընթացի վերջին փուլերում ստեղծված փակուղային իրավիճակն այն մտավախությունն է առաջացնում, թե ղարաբաղյան հակամարտությունը կարող է թեւակոխել որակական մի նոր փուլ, երբ փոխընդունելի որոշումների որոնումը իր տեղը կզիջի այսպես ասած զգացմունքային դիվանագիտությանը այստեղից բխող բոլոր տխուր հետեւանքներով: Թեպետ կողմերը համաձայնության են եկել քաղաքական մեծ պայմանագրի մի շարք կետերում, եւ ճակատում արդեն 2 ու կես տարում պահպանվել է զինադադարը, այնուհանդերձ, սկզբունքային հարցերում դիրքորոշումները մնում են իրարամերժ ու անսասան: Այսօր բոլորի համար արդեն ակնհայտ է, որ շուրջ 9-ամյա հակամարտության ընթացքում բազմաթիվ զրկանքներ կրած ԼՂՀ-ն երբեք չի համաձայնի գտնվել Ադրբեջանի գերիշխանության տակ, ինչպես նաեւ հսկայական կորուստներ կրած Ադրբեջանը հազիվ թե համաձայնի ԼՂՀ լիակատար անկախության գաղափարի հետ: Ակներեւ է նաեւ այն ճշմարտությունը, որ կողմերից որեւէ մեկի կատարյալ հաղթանակն անխուսափելիորեն կծնի հակառակորդի ռեւանշիզմի զգացում, ինչն իր հերթին Անդրկովկասը կվերածի մշտապես անկայուն ու պայթյունավտանգ տարածաշրջանի: Ստեփանակերտի անկախ դիտորդների կարծիքով, հատկապես Ղարաբաղին նույնիսկ ամենալայն ինքնավարություն պարտադրելու դեպքում տասնյակ հազարավոր զինված ղարաբաղցիներ եւ շուրջ 500 հազարանոց ղարաբաղյան համայնքը ՀՀ-ում կարող են դառնալ այնպիսի մի ապակայունացնող գործոն, որը կկործանի ոչ միայն փխրուն խաղաղությունը, այլեւ ցանկացած տնտեսական նախաձեռնություն, այդ թվում կասպիական նավթամուղը, որ պետության տարածքով էլ նա անցնի: Ինքնավարությունը, դիտորդների կարծիքով, վտանգավոր է ոչ միայն ցեղասպանության իմաստով: Ավելի քան 70-ամյա ադրբեջանական գաղութատիրության պատմության մեջ չկա մի փաստաթուղթ, որտեղ լիներ գոնե մեկ ղարաբաղցու ստորագրությունը՝ ԼՂՀ-ն Ադրբեջանի կազմում մտցնելու մասին: Սրանով է բացատրվում ադրբեջանական դիվանագիտության անզորությունը բանակցություններում: Ինքնավարության դեպքում նման փաստաթուղթ կարող է ծնվել, իսկ թե ինչ է նշանակում դա հայ ժողովրդի ազգային շահերի համար, հասկանալի է բոլորին: Դիտորդների համոզմամբ, փակուղային նման իրավիճակներում կողմերը գտնում են փոխզիջումային որոշում: Նրանք երբեմն ստեղծում են իրավահավասար միություններ, որտեղ պահպանելով անկախ պետականության բոլոր ատրիբուտները, համագործակցում են դաշնային պետության կազմում: Ստեփանակերտի դիտորդները գտնում են, որ Ադրբեջանն ինքը պետք է ընտրի՝ իրավահավասար միությո՞ւն, թե՞ մշտական պատերազմ:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

## Հայտարարություն

Կրթության եւ գիտության նախարարությունը տեղեկացնում է, որ 1997 թ.-ին բուհական ընդունելության քննությունների համար հիմք է ծառայելու հայոց լեզվի հարցաշարերի ժողովածուն (Երեւան, 1996 թ.), ինչպես նաեւ նախորդ 3 տարիների ընթացքում հրատարակված ժողովածուները:

*ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

digitised by A.R.A.R.@

